ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 10-Ն

«10» փետրվարի 2017 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-Ի N 64-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 15-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի 2017 թվականի բյուջեի հաստատման մասին>> N 64-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները:

1. Համայնքի բյուջեի եկամտային մասի <<Ընդամենը եկամուտներ>> տողի <<137571.2>> թիվը փոխարինել <<137762.6>> թվով, այդ թվում՝

   1)Համայնքի բյուջեի վարչական մասի եկամտային մասի 7131 հոդվածի (հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար) տողի <<9808.6>> թիվը փոխարինել <<10000.0>> թվով:

2. Բյուջեի ծախսային մասի բյուջետային ծախսերի գործառական և տնտեսագիտական դասակարգման <<Ընդամենը ծախսեր>> տողի <<վարչական մաս >> սյունակի <<137981.2>> թիվը փոխարինել <<138172.6>> թվով, այդ թվում՝

   1)Գործառական դասակարգման բաժին 11, խումբ 01, դաս 02 (պահուստային ֆոնդ) և տնտեսագիտական դասակարգման 4891 (պահուստային միջոցներ) հոդվածի <<2116.4>> թիվը փոխարինել <<1307.8>> թվով:

   2)Գործառական դասակարգման բաժին 06, խումբ 01, դաս 01 (բնակարանային շինարարություն) և տնտեսագիտական դասակարգման 4251 (շենքերի և շինությունների ընթացիկ նորոգում և պահպանում) հոդվածի <<0>> թիվը փոխարինել <<1000.0>> թվով:

3. Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժին 01,խումբ 06,դաս 01(ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ) և տնտեսագիտական դասակարգման 4819 (նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին) հոդվածից 50.0 հազար դրամ հատկացնել

<<Հայաստանի Հանրապետության Պատերազմի,Զինված ՈՒժերի,Աշխատանքի և Իրավապահ Մարմինների Վետերանների Միավորում>> հասարակական կազմակերպության Անիի մասնաճյուղին:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -1

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍՈՍ

2. ՁԱՔԱՐՅԱՆ ԱՎԵՏԻՔ

3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԻՆԵ

5. ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՌԼԵՆ

6. ՈՒՌՈՒՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ

7. ՍԱՀԱԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ

8. ՓԻԼՈՅԱՆ ՆՈՐԱՅՐ

9.ՈՒՌՈՒՏՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

1.ԳԱԼՈՅԱՆ ՌԱՖԻԿ

ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ 18000090 ՀԱՅԱՍՏԱՆ

ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ք. Մարալիկ
10 փետրվարի 2017 թվական